

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լյուդմիլա Սարգսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրանշակված տարբերակի (*Պ-951-19.02.2016, 15.03.2016-ՍՀ-010/0*) վերաբերյալ:

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության՝ նշված օրենքով նախատեսված տեսակների դեպքում (բացառությամբ մայրության նպաստի դեպքի) նպաստի վճարում՝ սկսած ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակահատվածի երկրորդ աշխատանքային օրվանից: Օրենքի նախագծով առաջարկվում է աշխատողի ժամանակավոր

անաշխատունակության ժամանակահատվածի առաջին աշխատանքային օրվա չափով կորցրած աշխատավարձը (եկամուտը) փոխահատուցել գործատուի հաշվին:

Համաձայն գործող օրենքի իրավակարգավորումների՝ անաշխատունակության առաջին աշխատանքային օրվա համար չի վճարվում, դրան հաջորդող հինգ աշխատանքային օրվա համար վճարվում է գործատուի միջոցների հաշվին (որը չի փոխհատուցվում), իսկ նպաստի մնացած մասը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Նշված մոտեցման նպատակն է. մի կողմից՝ ֆինանսական բեռը բաշխել իրավահարաբերությունների մասնակից կողմերի (քաղաքացի, գործատու և պետություն) միջև, իսկ մյուս կողմից՝ փոխադարձ զսպումների մեխանիզմների կիրառման միջոցով նվազագույնի հասցնել անբարեխիղճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Հարկ է նկատի ունենալ այն, որ նշված մոտեցումը կիրառվում է միջազգային պրակտիկայում:

Առաջարկության ընդունման դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարման համար գործատուների կատարած ծախսը կավելանա ավելի քան 20 տոկոսով (ժամանակավոր անաշխատունակության՝ մինչև 5 օր տևողության դեպքում գործատուների ծախսը կավելանա 25-100 տոկոսով. 2015 թվականին գործատուների ծախսը կազմել է շուրջ 1,6 մլրդ դրամ):

Ըստ օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ օրենքով սահմանված իրավակարգավորումը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 83-րդ և 84-րդ հոդվածներին: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ գործող օրենքի դրույթները չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, քանի որ, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, անձի սոցիա-

լական ապահովությունն իրականացվում է օրենքին համապատասխան (այսինքն՝ սոցիալական ապահովության ծավալը սահմանվում է օրենքով):

Օրենքի նախագծի ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացման:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում եռամսյա ժամկետում համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման մեջ:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա
ազդեցություն չի ունենա:

ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության
բնագավառում կարգավորման

1. <<Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:
Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագծով առաջարկվում է վարձու աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարել ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած 1-ին աշխատանքային օրվանից՝ ներկայումս 2-րդ աշխատանքային օրվանից վճարելու փոխարեն:* Նշված դրույթը կարող է խրախուսել մեկօրյա բացակայությունները՝ հատկապես նախատրոնական և հանգստյան օրերի նախօրյակներին, ինչը չհիմնավորված ֆինանսական ծախսեր կառաջացնի գործատուների համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա կնախատեսվի **որոշակի բացասական ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է վարձու աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարել ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած առաջին աշխատանքային օրվանից:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության
2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի
հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման
կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով
նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի բացասական ազդեցություն,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի
Նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության
գնահատման վերաբերյալ**

Նախագծով առաջարկվում է վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարել ժամանակավոր անաշխատունակության բոլոր օրերի համար՝ ի տարբերություն գործող օրենքի, որով նախատեսված է, որ ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի առաջին օրվա համար վարձու աշխատողին ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի վճարվում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի ընդունման դեպքում այլ հավասար պայմաններում ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերը կկազմեն շուրջ 0.3 մլրդ դրամ և դրանով պայմանավորված ՀՀ պետական բյուջեի եկամուտները կավելանան վերը նշված ծախսերի ավելացվող գումարի շուրջ 25 %-ի չափով: Համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա Նախագծի ընդունումը կունենա չեզոք ազդեցություն:

Պ-951-19.02.2016,15.03.2016-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2010թ. հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը ժամանակավոր անաշխատունակության առաջին վեց աշխատանքային օրերի համար վճարվում է գործատուի միջոցների հաշվին, որը չի փոխհատուցվում, իսկ նպաստի մնացած մասը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Վարձու աշխատողին հիվանդության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած առաջին օրվանից մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամության խմբի սահմանումը կամ հաշմանդամության խմբի վերանայումը:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Վարձու աշխատողին պրոթեզավորման նպաստ տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Առողջարանային բուժման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան բուժման ուղարկված վարձու աշխատողին, ինչպես նաև տուբերկույրոգային առողջարան մեկնած վարձու աշխատողին՝ առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Վարձու աշխատողին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ է տրվում՝

1) տնային (ամբուլատոր) պայմաններում ընտանիքի հիվանդ չափահաս անդամի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 7 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար.

2) տնային (ամբուլատոր) պայմաններում հիվանդ երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 24 օրացուցային օրից ոչ ավելի, իսկ վարակիչ հիվանդությունների պատճառով երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 28 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար.

3) հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար.

4) մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար, բայց ուղեգրում նշված ժամանակահատվածից ոչ ավելի: Ընդ որում, նպաստ է տրվում օրացուցային տարում մեկ անգամ:

2. Մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել, ընտանիքի հիվանդ անդամի խնամքին պաստորվում է երեխայի խնամքն իրականացնող այլ վարձու աշխատողին, երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) հիվանդության կամ նրա հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե անաշխատունակությունը շարունակվում է նաեւ չվճարվող արձակուրդի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդի ավարտից հետո, ապա ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է այն աշխատանքային օրվանից, երբ աշխատողը պետք է անցնէր աշխատանքի:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Աշխատանքից ազատման օրինականության մասին վեճի դեպքում վարձու աշխատողին ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության՝ գործատուի որոշման կամ դատարանի վճռի հիման վրա վարձու աշխատողին աշխատանքում վերականգնվելու օրվանից սկսած ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար:»:

Հոդված 8. Օրենքի 22-րդ հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 3-րդ աստվ սահմանված չափը) բաժանվում է 25-ի եւ բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային օրերի թվով:

13. Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված չափը) բաժանվում է 21-ի եւ բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային օրերի թվով:»:

Հոդված 9. Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջին երեք աշխատանքային օրերի համար գործատուի միջոցների հաշվին վճարված (հաշվարկված) ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը:»:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ:

Առաջարկվող օրինագծի նպատակը «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու իրավունք ունեցող վարձու աշխատողների իրավունքների պաշտպանությունն է եւ մասնավորապես ժամանակավոր անաշխատունակության վիճակում գտնվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում կորցրած աշխատավարձի կամ եկամտի ամբողջությամբ կամ մասնակիորեն, սակայն արդարության պահանջների պահպանմամբ, փոխհատուցումը:

«Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության՝ նշված օրենքով նախատեսված տեսակների դեպքում (բացառությամբ մայրության նպաստի դեպքի) նպաստի վճարում՝ սկսած ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակահատվածի երկրորդ աշխատանքային օրվանից: Այսինքն՝ աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի 1-ին աշխատանքային օրվա չափով կորցրած աշխատավարձը /եկամուտը/ գործող Օրենքով չի փոխհատուցվում:

Օրենքով սահմանված սույն իրավակարգավորումը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 83-րդ եւ 84-րդ հոդվածներին: Նշված հոդվածների համաձայն՝ ՀՀ-ն սոցիալական պետություն է եւ պետք է ապահովի մարդու եւ քաղաքացու արժանապատիվ գոյության իրավունքը եւ հիվանդության եւ Սահմանադրությամբ նախատեսված այլ դեպքերում մարդու եւ քաղաքացու սոցիալական ապահովությունը: Ակնհայտ է, որ ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի բոլոր աշխատանքային օրերի համար փոխհատուցման սահմանումն է, որ կապահովի այս հարցի շուրջ ընթացիկ օրենսդրության համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը եւ կնպաստի քննարկվող ոլորտում մարդու իրավունքների լիարժեք պահպանությանն ու պաշտպանությանը: Այս փոփոխությունը որոշակիորեն կնպաստի ժամանակավոր անաշխատունակություն ձեռք բերած անձանց սոցիալական ապահովությանը եւ կաջակցի հատկապես սոցիալապես անապահով խավերին պատկանող ժամանակավոր անաշխատունակ անձանց նյութական խնդիրների բարվոքմանը:

Հարկ է ընդգծել, որ սույն օրինագծով առաջարկվող փոփոխությունները հիմնավոր են նաեւ գործնական իմաստով, քանի որ ՀՀ աշխատաշուկայում աշխատողների միջին աշխատավարձը ցածր է, եւ ժամանակավորապես անաշխատունակ աշխատողին վերջինիս անաշխատունակության ժամանակահատվածի 1-ին աշխատանքային օրվա միջին աշխատավարձի հիմքի վրա այդ օրվա համար փոխհատուցման պարտականության սահմանումը գործատուի համար չի կարող համարվել անհամաչափ ֆինանսական բեռ, ինչպես նաեւ ժամանակավորապես անաշխատունակ հանրային ծառայողների մասով եւս պետության համար անհամաչափ ֆինանսական պարտավորություններ չի սահմանում: